

Դեղերի դիզայնը մոլեկուլային մոդելավորման մեթոդների ամբողջություն է, նախապես որոշված կենսաբանական հատկություններով կենսաբանական ակտիվ նոր միացությունների ուղղորդված նախագծման և ստացման համար: Այս ոլորտը դիտարկում է ընտրված կենսաբանական ակտիվությամբ օժտված օրգանական միացությունների դեղերի դիզայնի առարկան, խնդիրները և գործնական կիրառությունները: Առարկա հիմքում ընկած է դեղերի դիզայնի գործնական և տեսական ասպեկտը, ինչն ուսանողներին հնարավորություն է տալիս օգտագործել ձեռք բերված հմտությունները սեփական փորձերում: Դասընթացը նախատեսված է հինգերորդ կուրսի ուսանողների մոտ ձևավորելու տեսական և գործնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նրանց հետագայում կենսաինժեներիայի և կենսաինֆորմատիկայի ոլորտի մասնագետ դառնալու համար: